Ոմանք ևս կաւանդեն—սուրբ Սուքիասանց ընկերներէն եղած է Սարգիս, երբ ընկերներն նահատակուած են ի Սուկաւէտ Ս.» Սարգիս խոյս տուած է, բռնաւորն այս տեղ վերայ հասած՝ սպանած է։

ՁԵՌԱԳԻՐ ԱՌԵՏԱՐԱՆ [1]

Հայաստանի ամէն կողմն հին ձեռագիր գրքեր, մանաւանդ աւետարաններ անհաշիւ են. ժողովրդեան կողմէ մեծ յարգանք կը մատուցուի. կարող և բարեպաշտ մարդիկ իւրեանց նուիրական պարտք համարած են ինչ միջոցաւ և լինի, մեծ գրամ ծախսել և մի աւետարան գնել կամ գրել տալ։ Ոմանք իւրեանց տան բարեբաղբաղդութիւն համարած էին միշտ ձեռագիր աւետարան մի ունենալ, եթէ ունեցածը այրուէր կամ գերի տարուէր, մի ուրիշն պիտի գրել տային մեծ գնով և առաջնոյն տեղն դնէին։

Կան նաև ոմանք ևս, որք մի մի աւետարան իւրացնելով հարիւրաւոր կտաւներու մէջ փաթաթած, տանը մի անկիւնը նորա յատկացուցած՝ յարգանօք մոմ կը վառեն առջևն, իսկ բարեպաշտ անձինք ուխտելով այդ տունը կը դիմեն ընտանեօք, կը համբուրեն կամ մի գլուխ բժշկական աւետարան կարդացնել տալով մի մի նուէր ևս կտան։

Աւետարանի տէրն նուէրը կիւրացնէ, կտաւն ևս հին կտաւներու վերան կը փաթաթէ։ Շատ հին աւե-

---

1. Պատահած եմ շատ մի ձեռագիր աւետարաններու որոց ոմանք ընտիր յիշատակարաններ ունին ոտանաւորով գրած. հետզհետէ կը ներկայացնեմ ընթերցողաց։